



## 11. ՄԻ ՀԱՅԻ ՀԵՔԻԱԹԸ

Մի մարդ է ըլնում, ինքը հայ: Սա մեռնելիս կանչում է իր որդուն ու խրատ տալիս: Սա ասում է նույնպես և իր որդուն, թե մի հրացան ունի, որ ինչ որս ասես՝ վեր կգցի, միայն որս գնալիս՝ արեգակ տեղ որս անի և ոչ թե ամպոտ, մութ տեղերը. եթե մեկն ուզի հրացանը տեսնելու՝ իր ձեռից չհանի, ուրիշին չտա. եթե առնող լինի՝ չվաճառի, ապա թե ոչ իր դլխին վատ բան կպատահի: Որդին խոսք է տալիս կատարել հոր հրամանը, և հայրը այդպես մեռնում է: Սրա մահից հետո անցնում է մի քանի ժամանակ. որդին երբեմն-երբեմն որսի է գնում այս հրացանով:

Մի անգամ էլ իր ընկերներով միասին գնաց որսի: Ընկերները մի ճանապարհի վրով գնացին, նա ուրիշ ճանապարհ բռնեց, գնաց: Գնաց, գնաց՝ մի ամպոտ տեղ հասավ. ինքն իրան միտք արեց, թե իմ հերը ինչու ասեց ամպ տեղ որս չանել. ես պիտի անպարձան գնամ այնտեղ որս անելու: Ու գնաց տեսավ մի մեծ թռչուն նստել է ու կրակի նման փայլում է նրա կաշին: Նա ուզեց հրացանով տալ՝ թռավ ուրիշ տեղ նստեց. այնտեղ վազեց, որ տա՝ էլի փախավ, մի խոսքով՝ մի քանի անգամ տեղ փոխեց: Վերջապես հասավ ու նրա թռած տեղից տվեց՝ վայր գցեց: Նրա կաշին քերթեց՝ վեր կալավ,

իսկ միսը դեն գցեց, Քաղաք վերադառնալով՝ տուն էր գնում, ճանապարհին պատահեց թաքավորի վեզիրը ու հարցրեց, թե չի ծախի էս հրացանը, նա ասաց, թե չէ. խնդրեց տեսնելու շտվեց: Հարցրեց, թե չի ծախի էս թռչունը, նա ասաց՝ կծախի, ու շատ էժան գնով ծախեց նրա վրա: Թաքավորի վեզիրը տարավ թաքավորի պալատում կախ արեց օճորքից ու գիշեր ժամանակ էնպես էր լիս տալիս սենյակում, ինչպես ճրագը, դեռ ավելի լավ:

Թաքավորը հարցրեց, թե որտեղից է առել, նա ասաց, թե մի երիտասարդ տղից, ավելացնելով, որ «սորա հետ լավ կլինի, որ ունենաս Մարալների թաքավորը, որ սորանից ավելի լավ է պըսպըղում. նա ֆլան ծովի մեջ է բնակվում, ու թե այս բանի բերողը կարող է և նրան բերել»:

Թաքավորը կանչում է էն տղին ու ասում, որ պիտի գնա բերի Մարալների թաքավորին: Տաս օր ժամանակ է տալիս, երբ բերեց՝ նրան մի մեծ պարգև կտա, եթե ոչ՝ նրա գլուխը կտրել կտա: Նա համաձայնեց. գնաց մորն ասաց թաքավորի ուզածը:

Մերը ասաց.— Ախար դու ինչո՞ւ չէիր քո հոր ասածին լսում, որ այսպիսի խաթարալի մեջ չընկնեիր. դեռ քո գլխին շատ բաներ պիտի անցկենա:

Մայրը ասեց նրան, որ գնա թաքավորից երեսուն սալլ սպիտակ աղ ուզի, երեսուն հատ գոմշի կաշի: Նա գնաց ուզեց այդ բոլորը թաքավորից ու բերեց տվեց իր մորը:

Մայրը ասաց.— Այս երեսուն սալլ աղը կտանես ֆլան ծովի շրաղը շաղ կտաս, իսկ քսանինը կաշին մին-մին կզցես ծովի վրա, մի կաշին քեզ մոտ կպահես: Մարալների թաքավորը շատ է սիրում էսպիսի աղ. նա կգա ու կսկսի ուտել. նրան ձեռք չես տա, մինչև էնքան կուտի, որ կթուլանա. էն ժամանակ ձեռիդ կաշին կփռես ջրի երեսը՝ որտեղ նա դուրս եկավ, որ էլ չկարենա հտ գնալ ու իսկույն գյամը կզցես նրա բերանը, կնստես, կգաս առանց վախենալու:

Սա, ինչպես մայրը ասել էր, գնաց արեց ու բռնեց Մարալների թաքավորին. նստեց վրեն ու տարավ թաքավորի մոտ: Թաքավորը մնաց զարմացած՝ տեսնելով այսպիսի մի գեղեցիկ մարալ: Նա հրամայեց վեզիրին՝ տանել այս տղին իր գանձարանը ու ինչքան փող կուզի՝ տալ նորան: Բայց վեզիրը նորան տարավ առանձին

տեղ ու հարցրեց, թե հիմա էլ չի ծախի իր հրացանը, ու երբ մերձեց՝ վեզիրը, ինչպես էն թուռնի կաշին առնելիս, մի քանի ապտակ խփեց ու առանց մի կոպեկ տալու, հետ դարձրեց՝ սպառնալով դեռ նորան շատ շարժարել: Սա գնաց իրանց տուն, բոլորը պատմեց մորը:

Վեզիրը մի քանի ժամանակ հետո հորդորեց թաքավորին՝ բերել տալ իր համար նույն ծովի մեջ եղած ամենագեղեցիկ աղջիկը՝ իր համար կնիկ: Սորա համար դարձյալ կանչեց էն տգին ու հանձնարարեց դարձյալ բերելու, երեսուն օր ժամանակ տվեց, որ գնա ու բերի. թե չէ նրա գլուխը կկտրի:

Այս տղեն գնաց այս բանը պատմեց իր մորը. մայրը ասեց, որ այդ բանը շատ դժվար է գլուխ բերել. նա այն ծովի մեջ է բնակվում, որտեղից Մարալների թաքավորն է դուրս եկել: Բայց եթե կարենա բերել նրան, պիտի նրա ձեռով թաքավոր լինի այս թաքավորի փոխանակ: Այս կինը շատ իմաստուն էր, աշխարհի ամեն բանը հասկանում էր, ինչպես իր մարդը:

Նրա մայրը սկսեց պատմել, թե ինչպես պիտի գնա ու էն աղյուկանը բերի.

— Մենք գտնում մի շատ լավ ձի ունենք, որ իմաստուն է. նրա վրա կնստես ու նա քեզ կտանի էն ծովի ափը. դու այնտեղ քեզ ամուր կպահես, ձին կմտնի ծովի մեջը և ուղղակի կկանգնի էն աղջկա դռանը, դու վեր կգաս ու կմտնես նրա սենյակը: Նա երեք օրը մի անգամ է զարթնում, քո գնալու ժամանակ քնած կլինի. նրա կառավարի երկու ծայրին ոսկե շամդանների մեջ մոմեր դրած կըլնեն, երկուսը գլխի կողմից, երկուսը ոտների կողմից վառած. դու շտապով նրան իր տեղաջորի մեջ կփաթաթես և դուրս կբերես, կնստես ձիդ ու դուրս կգաս, իսկ եթե փոքր ինչ ուշացար, նա շատ ձիաներ ունի, կխաբեն ու իրանց մոտ կքաշեն քո ձիուն էլ:

Նա գնաց ինչպես ասել էր մայրը՝ արեց ու բերեց աղջկանը, տարավ թաքավորի մոտ, մի առանձին սենյակի մեջ դրեց: Նա դեռ քնած էր. երբ զարթնեց՝ զարմացավ, թե որտեղ է ինքը: Այն տղան գնաց մոտը ու պատմեց, որ ինքն է բերել այստեղի թաքավորի համար և թե բացի իրենից նրա համար ուրիշ բաներ էլ է բերել, բայց այս բոլորի համար միայն ծեծ է կերել, այլևս ոչինչ: Հետո այս տղեն գնաց թաքավորին իմաց տվեց, որ բերել է էն աղջկանը: Նա շատ ուրախացավ այս բանի վրա ու հրամայեց իր վեզիրին,

նրան իր գանձարանից շատ փող տալ, բայց կրկին փողի փոխանակ մի լավ ծեծ կերավ նրանից և գնաց իրենց տունը:

Թաքավորն ու էն աղջիկը սկսեցին իրար հետ խոսել. աղջիկը ասեց, որ նրան կառնի. միայն խնդրեց, որ իր թաքավորությունը միայն երեք օր իրեն տա: Թաքավորը այս քանին համաձայնեց: Աղջիկը ամենքից առաջ կանչել տվեց էն տղին և թաքավորի ներկայությամբ սկսեց նրա հետ խոսել: Թաքավորին հարցրեց, թե այս տղեն այսքան բան է բերել իր համար, նա սորան ի՞նչ է ընծայել: Նա ասաց՝ մեծ փող է տվել: Հետո հարցրեց էն տղին: Նա ասաց իր բերած երեք բանի համար էլ լավ ծեծ է կերել:

Աղջիկը հետո դառնալով թաքավորին, ասաց.— Լա՛վ թաքավոր ես, քո գործերը լավ ես կառավարում ուրիշի ձեռքով: Հետո խնդրեց տեսնել նրա գանձարանը: Նա առաջ պարծենում էր իր գանձերով, միայն երբ գնացին տեսնելու, թաքավորը զարմացավ, թե այնքան փողերը ինչ են եղել:

Աղջիկը ասեց.— Լա՛վ թաքավոր ես, գանձարանդ ուրիշներին ևս հանձնել, ինչ ուզում են՝ անում են:

Հետո ասեց թաքավորին, թե ինքն իր տանը այնպիսի ձիաներ ունի, եթե նրանց կաթով ինքը լողանա՝ կերիտասարդանա, ու այն ժամանակ ինքը կպսակվի նրա հետ: Թաքավորը համաձայնեց, ու աղջիկը էն տղին ուղարկեց բերելու իր ձիանոցը:

Նա ասաց.— Կերթաս էն ծովի ափին կկանգնես ու ձեն կտաս իմ ձիանոցը, թե Գյուլիզարը կանչում է: Նրանք դուրս կգան, դու իսկույն պիտի ասես, որ ես եմ ուղարկել, թե չէ՝ քեզ կտոր-կտոր կանեն:

Նա իր ձին նստեց գնաց էն ծովի ափին կանգնեց ու ձեն տվեց. երեք կատաղած ձիաներ դուրս եկան, վախից նրա լեզուն կապ ընկավ ու չկարաց խոսի. էն ժամանակ նրա իմաստուն ձին նրա տեղակ խոսեց, ասելով թե Գյուլիզարից են ուղարկված: Այդ ձիաները երեք հատ էին. մինը՝ Սև, մինը՝ Սիպտակ, մինը՝ Կարմիր. այնպիսի ձիաներ, որ հազիվ կարելի է ճարել աշխարհիս երեսին: Նրանք նրա առաջը ընկան ու գնացին: Տղեն տարավ աղջրկանը ներկայացրեց, նա նրանց կաթը կթեց և այն կաթը մի մաշիկի մեջ ածեց ու առաջարկեց թաքավորին, որ ծերունի էր, մոտ վաթսուն-յոթանասուն տարեկան, մտնել այն մաշիկի մեջ, որ չահելանա: Սկզբում նա վախեցավ. էգ պատճառով էլ էն տղին.

փորձեց և երբ նա մտավ այն մաշինի մեջ՝ այնպես երիտասար-  
դացավ, կարծես հինգ-տաս տարեկան երեխա լիներ: Հետո թաքա-  
վորը մտավ այն մաշինի մեջ, բայց աղջիկը նրան խեղդեց. հետո  
ձիաներին հրամայեց՝ նրա սաղ տունը կոտորել: Էն տղին թաքա-  
վոր դրեց էս քաղաքի վրա, պսակվեց նրա վրա ու ջատ տարիներ  
երջանիկ կյանք վարեցին իրար հետ:

